ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 68

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների (բնակավայրերի) քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով)

ՀՀ Վայոց Ձորի մարզի Ջերմուկ համայնքի գլխավոր հատակագծում փոփոխություն կատարելու վերաբերյալ

1.Հանձնաժողովը տալիս է իր դրական եզրակացությունը ՀՀ Վայոց Ձորի մարզի Ջերմուկ համայնքի գլխավոր հատակագծում հետևյալ փոփոխությանը.

Հողամասերի առկա նպատակային և գործառնական նշանակությունը	**Փոփոխությունից հետո հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունը**
Ջերմուկ համայնքի 200 քմ հողամասի գյուղատնտեսական նպատակային և արոտավայրերի գործառնական նշանակությունները	Էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային և կապի օբյեկտների գործառնական նշանակության

2. Հանձնաժողովը նշում է, որ կառուցապատման հետագա գործառույթները պետք է իրականացվեն ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես, ապահովելով ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում>> շինարարական նորմերի պահանջները:

3. Ջերմուկ համայնքի ղեկավարին առաջարկվում է.

- «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14^3–րդ հոդվածի 30-րդ մասով սահմանված կարգով նշված փոփոխություններն արտացոլել համայնքի հերթապահ քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել Ջերմուկ համայնքի հաստատված գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝		
ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի առաջին տեղակալ		Ա. Բաղալյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետ		Ա. Հախումյան

Երևան, ՀՀ կառավարությանն առընթեր
քաղաքաշինության պետական կոմիտե

26.05.2017թ.